

**Պատկերապատումի և պատկերի երևանյան առաջին միջազգային փառատոն
3-ից 5-ը հոտկենբերի 2008 թ.**

«Պատկերապատում 2008 ցուցապաստառի մրցույթի» կանոնադրություն
հովանավորությամբ **ՀՀ մշակույթի նախարարության
և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության**

Հոդված 1. Հայաստանում պատկերապատման զարգացման միությունը
/այսուհետ՝ ՀՊՁՄ/ տեղակայված Նավարացու 492 պողոտա, 16000 Անգուլեն,
Ֆրանսիա հասցեով, կազմակերպում է «Պատկերապատում 2008 ցուցապաստառի
մրցույթ», որը մեկնարկում է **2008 թ. մարտի 3-ին:**

Մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետն է **2008 թ. ապրիլի 30-
ը**, փաթեթի ստացման ժամկետը որոշվում է փոստային կնիքով:

Հոդված 2. Մրցույթն անվճար է, մրցույթին կարող են մասնակցել 17 տարեկանից
բարձր **ծաղկողներ, գեղանկարիչներ, նկարիչներ, պատկերապատողներ:**

Հոդված 3. Մրցույթի մասնակիցները պետք է ուղարկեն իրենց կողմից
կատարված սևուսպիտակ կամ գունավոր նկարազարդման բնօրինակը, որը
կօգտագործվի 2008 թվականի հոկտեմբերին երևանում կայանալիք
Պատկերապատման և պատկերի առաջին փառատոնի ազդագրերի և գրքույկների
ծնավորման համար (տպիչով տպած տարբերակները կհամարվեն բնօրինակ): Թեման
ազատ է, սակայն նկարները պետք է կատարվեն՝ համաձայն պատկերապատումների
ավանդական ձևերի: Ընդունվում են ցանկացած ոճի և ժանրի աշխատանքներ՝
բացառությամբ հասարակական կարգին և բարոյական նորմերին չհամապատասխանող
գործերի :

Հոդված 4. Թղթե կրիչի ֆորմատը պետք է լինի **պարտադիր A3** /առավելագույնը՝
29,7 x 42սմ/՝ **ֆրանսիական ձևով** /ուղղահայաց/: Ուղարկվող գործերի հետ պետք է կցել
ինքնակենսագրություն: Ուղարկվող փաթեթը պետք է լինի անպայման **հարթ** /ոչ
զլանաձև/, ուղարկվի փոստով կամ ներկայացվի Ֆրանսիայում Հայաստանի
դեսպանություն՝ ամենաուշը մինչև 2008 թ. ապրիլի 30-ը: Մասնակցության ցանկացած
այլ ձև բացառվում է: Յուրաքանչյուր նկարի հետևում պետք է նշված լինեն մասնակցի
անունը, ազգանունը և հեռախոսահամարը: Աշխատանքները պետք է ուղարկել հետևյալ
հասցեով՝

Պատկերապատումի և պատկերի երևանյան միջազգային փառատոն
«Պատկերապատում 2008 ցուցապաստառի մրցույթ»
Ֆրանսիայի դեսպանություն
Գրիգոր Լուսավորչի 8, Երևան 0015

Festival International de la Bande Dessinée et de l'image d'Erévan
"Concours de l'affiche de Badgerabadoum 2008"

Հոդված 5. Աշխատանքների ստացման կամ մրցույթին վերաբերող ցանկացած
փոստի պատասխան չի տրվելու:

Հոդված 6. Ժյուրին՝ կազմված նկարազարդման ոլորտի պրոֆեսիոնալներից,
ՀՊՁՄ-ի ներկայացուցչից, ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցչից և
Ֆրանսիայի դեսպանության մշակութային բաժնի ներկայացուցչից, կընտրի 5
լավագույն գործեր, որոնք կցուցադրվեն փառատոնի շրջանակներում կայանալիք
«Պատկերապատում 2008 ցուցապաստառի մրցույթի ընտրյալներ» խորագիրը կրող

ցուցահանդեսի ժամանակ: Ժյուրին կրնտրի **երեք դափնեկիր** /դափնեկիրների հայտարարումը նախատեսված է 2008 թ. մայիսի 9-ից 12-ը. կոնկրետ օրը ենթակա է ճշգրտման/: Փաստաթղթերի քննությունը և արդյունքների հրապարակումը տեղի կունենան Երևանում:

Հոդված 7. Մրցանակներ

- ԶՊԶՄ-ն կտրամադրի դրամական պարգև
 - 250 եվրո՝ «Պատկերապատում 2008 ցուցապաստառի մրցույթի» առաջին դափնեկիրին
 - 75 եվրո՝ երկրորդին
 - 50 եվրո՝ երրորդին

Դրամական պարգևը կտրամադրվի մինչև 2008 թ. հոկտեմբերի 31-ը

Պատկերապատումի և պատկերի երևանյան միջազգային փառատոնի կողմից:

- Փառատոնի գործընկեր ԶԶ մշակույթի նախարարությունը երեք դափնեկիրներին կպարգևատրի պատվոգրով:
- Փառատոնի մյուս գործընկեր Ֆրանսիայի դեսպանությունը **յուրաքանչյուր դափնեկիրին** կհանձնի **պատկերապատման 3-ական ալբոմ:**

Հոդված 8. Երեք դափնեկիրների գործերը կհանդիսանան **Պատկերապատումի և պատկերի երևանյան միջազգային փառատոնի սեփականությունը:** Այն հեղինակների գործերը, որոնք չեն ընտրվել, կվերադարձվեն փառատոնի ժամանակ: Աշխատանքների կորստի, վնասման կամ կողուպուտի դեպքերում կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում:

Հոդված 9. *Փառատոնը* իրավունք է վերապահում սույն մրցույթը կրճատելու, երկարաձգելու, փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու հնարավորությունը՝ հանգամանքների բերումով կամ ֆորս մաժորի պարագայում: **Այս դեպքերում այն պատասխանատվություն չի կրում:**

Հոդված 10. *Փառատոնը* կարող է օգտագործել երեք դափնեկիրների աշխատանքները՝ փառատոնին առնչվող ցուցապաստառները, բուկլետները, ծրագրերը և այլ հրատարակումները պատկերազարդելու համար:

Փառատոնը կարող է հետագայում օգտագործել մասնակիցների (բացառությամբ՝ մրցանակակիրների)՝ մրցույթին ներկայացված աշխատանքները (հրապարակումներ և այլն) միայն այն դեպքում, երբ առկա է դրանք ճիշտ և պատշաճ ձևով տարածելու և օգտագործելու, հեղինակների ոչ գույքային սեփականության իրավունքի պահպանմամբ սեփականության իրավունքների փոխանցման փոխհատուցման հետ կապված՝ յուրաքանչյուր կողմի իրավունքները և պարտավորությունները սահմանող թույլտվությունը:

Հոդված 11. Մրցույթին մասնակցության փաստն ինքնին ենթադրում է սույն կանոնադրության ընդունումն իր բոլոր ձևերով՝ առանց որևէ խտրականության: Սույն կանոնադրությունը ի պահ է հանձնվում ԶԶ մշակույթի նախարարությանը, ինչպես նաև Ֆրանսիայի դեսպանությանը: Կանոնադրությունը հասանելի է անվճար կերպով www.apbda.org ինտերնետային կայքում:

Պատկերապատումի և պատկերի երևանյան առաջին միջազգային փառատոն

«Պատկերապատում 2008 ցուցապաստառի մրցույթ»
Կոնտակտային տվյալներ

APBDA
492, avenue de Navarre - 16000 Angoulême, France
www.apbda.org

Ժան Մարտիկյան - jean@verrazano.net
Ժան Սիրափյան - jsirapian@gmail.com
+ 33 662 76 90 85 /Ղայաստան՝ + 374 91 111 834/
Լորան Մելիքյան - lmelikian@wanadoo.fr + 33 611 75 12 48
Տիգրան Սանգասարյան – tigran@patkerphoto.com + 374 93 820 529